

Փաստաբանները հեռացվեցին դատական նիստերի դահլիճից **(<http://www.aravot.am/2015/11/04/625517/>)**



Այսօր Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում տեղի ունեցավ քաղաքացիական ակտիվիստ Վարդգես Գասպարիի գործով դատական նիստ: Նշենք, որ ՀՀ վարչական դատարանի դատավոր Ռուզան Հակոբյանը միջնորդել էր, որ Վարդգես Գասպարիին քրեական պատասխանատվության ենթարկեն:

Ըստ մեղադրանքի՝ Վարդգես Գասպարին ՀՀ վարչական դատարանում դատական նիստի ժամանակ դատավարությանը մասնակցող հայցվորի ներկայացուցիչներ՝ ՀՀ Ոստիկանության ծառայողներ Դիանա Վարդանյանի եւ Սոնա Մելիքյանի հասցեին հնչեցրել է «Դուք հանցագործ սրիկաներ եք, մարդասպաններ, թափթփուկներ, լակոտներ, դուք սպանեցիք իմ եղբորը, բավական ա մարդասպաններին, ընդհուպ մինչեւ Վովա Գասպարյանին, թաքցնեք Ձեր փեշի տակ: Վեց տարի ա ինչ եք անում, թափթփուկներ, հանցագործներ», ապա դատական նիստը նախագահող դատավոր Ռուզաննա Հակոբյանի հասցեին՝ «Ձեր նման անարժանապատիվ եւ անինքնասեր դատավորներ են, որ այսօր իրավիճակը հասցրել են այստեղ: Միայն այն, որ Եվրոպական դատարաններում Ձեր վճիռների 46-ից 47-ը ճանաչվել են անվավեր, դա պետք է Ձեզ մի քիչ հուզեր, բայց քանի որ դուք անարժան եք եւ անինքնասեր, որ Ձեր գործակալական գործողությունն եք կատարում», «Դուք ստոր եւ անարժանապատիվ դատավորներ եք, որպես գործակալներ այս հանցագործ իշխանությանը պահում եք իրենց գործի վրա» արտահայտությունները, որի արդյունքում խոչընդոտել է դատական նիստի բնականոն աշխատանքը:

Նշենք նաև, որ դատարանում պարոն Գասպարին միջնորդություն էր ներկայացրել, որ ոստիկանության ներկայացուցիչ Սոնա Մելիքյանը դատարանում կեղծ ցուցմունք է տվել, որի համար պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի: Սակայն այն մերժվել էր՝ առանց պատճառաբանության:

Այսօրվա` անոթների 4-րդ մասին, Վարդգես Գասպարին այն հարցով իր դիրքորոշումը հայտնեց` հայտարարելով, որ դատարանը իշխող վարչակարգի օղակներից մեկն է. «Ոստիկանության ներկայացուցիչն ակնհայտ կեղծ ցուցմունք է տալիս, և դատավոր արդարացնելու պատասխանատվություն է վերցնում, այնպես, ինչպես բոլոր այլ քրեական գործերով»:

Այնուհետև դատավորը պարոն Գասպարին զգուշացրեց դատական կարգը խանգարելու մասին, Վարդգես Գասպարին հիշեցրեց, թե այդ ինչպե՞ս էր, որ օրինակ` Յարսնաքարի գործով քրեական հանցագործները դատարաններում ինչ ուզում անում էին, սեռական հայիոյանքներ հնչեցնում, իսկ դատավորը ծպտուն անգամ չէր հանում:

Այս ասելով` Վարդգես Գասպարին լքեց դատական նիստերի դահլիճը: Նրա ներկայացուցիչներ Տիգրան Եգորյանն ու Դավիթ Գյուրջյանը հայտարարեցին, որ առանց իրենց պաշտպանյալի չեն մասնակցում դատական նիստին:

Դատավոր Նելլի Բաղդասարյանը նրանց նկատմամբ սանկցիա կիրառեց ու հեռացրեց դատական նիստերի դահլիճից:

Կատարվածին գնահատական տալով` Վարդգես Գասպարին ասաց. «Այս խնդիրն ունի դատական լուծում: Ես դատավորերին ասում եմ` դուք ձեռքերդ թափ եք տվել օրենքից, ասում եք` մեկ է գործը կգնա Եվրոպական դատարան, 5-10 տարի հետո ինչ կլինի, դա չի հետաքրքրում իրենց: Իսկ ինձ այսօր հետաքրքրում են ՀՀ-ի դեմ կայացված վճիռները, որոնք դատավորների փնթիության պատճառով են և իմ գրպանից են վճարվում»:

Պարոն Գասպարին հայտնեց, որ ինքը Եվրոպական դատարանով կայացված անարդար վճիռների տուժածների հետ իր համաձայնությունն է հայտնում:

Տաթև ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համաձայն «Յեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» օրենքի` լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը չպետք է բացահայտի լրատվական նյութի էական մասը: Կայքում լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս քաղվածքի վերնագրում լրատվական միջոցի անվանման նշումը պարտադիր է, նաեւ պարտադիր է կայքի ակտիվ հղումի տեղադրումը:



Յեղինակ Լրագրող

Տաթև ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

[\(http://www.aravot.am/author/tatev/\)](http://www.aravot.am/author/tatev/)

ՆՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ



Վարդես Գասպարի. «Ոստիկանը մի արտաձ է, որո մեզ նման չէ»



Գասպարին դատավորին հնքնաբազարկի միջնորդություն է ներկայացրել



Դատավորը խոչընդոտեց «Առավոտի» լրագրողի աշխատանքը. հիմնավորեք լուսանկարելու անհրաժեշտությունը



Վարդես Գասպարի. «Ոստիկանն ակնհայտ սուտ զուգմունք տվեց»